

ԲԱԺԻՆ 3

ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Մեթոդաբանական պարզաբանումներ

Ներքուհական և բարձրագույն մասնագիտական կրթական մակարդակ ունեցողներին են վերագրվել հետևյալ կրթական մակարդակները՝ «Գիտությունների դոկտոր» և «Գիտությունների թեկնածու», որոնք միավորվել են «Գիտական աստիճանը» տողում:

«Ներքուհական մասնագիտական», որը ներառել է ասպիրանտուրա, ինտերնատուրա, օրդինատուրա, շարունակական մագիստրատուրա ավարտած անձանց:

«Բարձրագույն մասնագիտական», որը ներառել է պետական և ոչ պետական ԲՈՒՆ-եր՝ համալսարան, ինստիտուտ, ակադեմիա, կոնսերվատորիա, ինչպես նաև բակալավրատուրա և մագիստրատուրա ավարտած անձանց:

«Թերի բարձրագույն» կրթական մակարդակին են վերագրվել ԲՈՒՆ-երում սովորող և սովորած և ուսման ժամկետի կեսից ավելին անցած, ինչպես նաև ուսումնական դասընթացն ամբողջությամբ ավարտած, որակավորման պետական քննությանները չհանձնած կամ ավարտական դիպլոմային աշխատանքները չպաշտպանած անձինք:

«Միջին մասնագիտական» կրթական մակարդակին են վերագրվել այն անձինք, ովքեր ավարտել են տեխնիկում, քոլեջ կամ դրանց հավասարեցված այլ պետական և ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ:

«Նախնական մասնագիտական» կրթական մակարդակին են վերագրվել այն անձինք, ովքեր հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա ձեռք են բերել նախնական մասնագիտական կրթություն (արհեստագործական, պրոֆտեխնիկական, ճյուղային պրոֆեսիոնալ, տեխնիկական ուսումնարաններ):

«Չնդհանուր միջնակարգ» կրթական մակարդակին են վերագրվել միջնակարգ հանրակրթական դպրոց, վարժարան, գիմնազիա և միջնակարգ հանրակրթական ուսումնական ծրագրեր իրականացնող ուսումնական այլ հաստատություններ ավարտած անձինք:

«Չնդհանուր հիմնական» կրթական մակարդակին են վերագրվել հիմնական հանրակրթական դպրոց ավարտած և համապատասխան վկայական (8-րդ դասարան ավարտած) ստացած անձինք:

«Չնդհանուր տարրական» կրթական մակարդակին են վերագրվել տարրական դասընթացն ավարտած անձինք:

«Չունի տարրական» կրթական մակարդակին են վերագրվել տարրական կրթություն չունեցող, սակայն որևէ լեզվով գրել, կարդալ կամ միայն կարդալ իմացող 7 և բարձր տարիքի անձինք:

Ուսումնական հաստատության տեսակները

«Ներքուհական մասնագիտական» - ուսումնական կենտրոններ՝ դոկտորանտի ծրագրով, ինչպես նաև համապատասխան կրթական ծրագրերով ԲՈՒՆ-եր, գիտական հիմնարկներ, ասպիրանտուրա, ինտերնատուրա:

«Բարձրագույն մասնագիտական» - պետական և ոչ պետական ԲՈՒՆ-եր (ինստիտուտներ, ակադեմիաներ, համալսարաններ, կոնսերվատորիաներ և դրանց հավասարեցված բարձրագույն մասնագիտական ծրագրեր իրականացնող այլ ուսումնական հաստատություններ):

«Միջին մասնագիտական»- պետական և ոչ պետական տեխնիկումներ, քոլեջներ, և դրանց հավասարեցված միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող այլ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ:

«Տարրակրթական» - հիմնական և հանրակրթական միջնակարգ, տարրական դպրոցներ, գիմնազիաներ, վարժարաններ, հատուկ գիշերօթիկներ, ինչպես նաև մտավոր և ֆիզիկական զարգացման պակաս ունեցող երեխաների դպրոցներ:

«Լրացուցիչ կրթություն»- ընդհանուր կրթություն չսովորող դպրոցներ (ուսումնական հաստատություններին կից նախապատրաստական դասընթացներ, վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներ), ինչպես նաև մինչև վեց ամիս ժամկետով դասընթացներ: